

«Մոզո» ՈՒՎԿ ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ

*2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Տեղեկատվություն ընկերության վերաբերյալ.....	5
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները.....	5
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր.....	5
4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ	23
5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	26
6. Ժամկետային ավանդ բանկում	27
7. Հաճախորդներին տրված վարկեր	27
8. Վաճառքի համար պահվող ակտիվներ	29
9. Հիմնական միջոցներ	29
10. Ոչ նյութական ակտիվներ	30
11. Հարկում	30
12. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	31
13. Կանխավճարներ	32
14. Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր	32
15. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	32
16. Բաժնետիրական կապիտալ	32
17. Չուտ տոկոսային եկամուտ.....	33
18. Կոմիսիոն և այլ վճարների գծով զուտ եկամուտ	33
19. Անձնակազմի գծով, վարչական և այլ գործառնական ծախսեր.....	34
20. Ֆինանսական երաշխիքի գծով պահուստ	34
21. Պարտավորվածություններ և պայմանական պարտավորություններ	35
22. Ռիսկերի կառավարում	36
23. Իրական արժեքի չափում.....	39
24. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետի վերլուծություն.....	41
25. Կապակցված կողմերի բացահայտումներ	41
26. Կապիտալի համարժեքություն.....	42
27. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն	42



**Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ**

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ և Կանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Մոզո» ՈՒՎԿ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
Բաժնետիրոջը և Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Մոզո» ՈՒՎԿ ՍՊ ընկերության («Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ների):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի Պրոֆեսիոնալ Հաշվապահների Էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք Էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և Տնօրենների խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:



EY

**Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ**

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- ▶ հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ▶ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:



**Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ**

- ▶ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից տեղեկատվության բացահայտումների խելամտությունը:
- ▶ եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:
- ▶ գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Տնօրենների խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝

Էրիկ Հայրապետյան

Գլխավոր տնօրեն՝ Ն. Սարգսյան՝
ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի
(գործող 2016թ. օգոստոսի 1-ին տրված լիազորագրի հիման վրա)

27 հունիսի, 2019թ.



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2018թ.	2017թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	15,492	48,582
Ժամկետային ավանդ բանկում	6	2,524,332	-
Հաճախորդներին տրված վարկեր	7	5,723,208	970,784
Հիմնական միջոցներ	9	65,116	18,086
Ոչ նյութական ակտիվներ	10	4,411	4,057
Հետաձգված հարկային ակտիվ	11	66,424	29,694
Վաճառքի համար պահվող ակտիվներ	8	17,601	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	12	37,068	-
Կանխավճարներ	13	8,814	-
Այլ ակտիվներ		277	8,810
		8,462,743	1,080,013
Ընդամենը ակտիվներ			
Պարտավորություններ			
Բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր	14	7,230,407	805,878
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	298,994	91,734
Ֆինանսական երաշխիքի գծով պահուստ	20	106,898	-
Այլ պարտավորություններ		2,377	488
		7,638,676	898,100
Ընդամենը պարտավորություններ			
Կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	16	800,000	300,000
Այլ պահուստներ		(93,456)	-
Զբաղիված շահույթ / (Կուտակված վնաս)		117,523	(118,087)
		824,067	181,913
Ընդամենը կապիտալ			
		8,462,743	1,080,013
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ			

Ստորագրվել և վավերացվել են Ընկերության Ղեկավարության կողմից

Մեսրոպ Առաքեյան



Գլխավոր տնօրեն



Մարինե Աղամայան



Գլխավոր հաշվապահ

27 հունիսի, 2019թ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ***(հազար ՀՀ դրամ)*

	Ծան.	2018թ.	2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակա- հատվածի համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտ	17	1,142,510	36,073
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	17	(396,668)	(10,278)
Չուտ տոկոսային եկամուտ		745,842	25,795
Վարկային կորուստների գծով ծախսեր	7	(439,308)	(24,360)
Այլ արժեզրկման հակադարձում		2,182	–
Չուտ տոկոսային եկամուտ վարկ. կորուստների ծախսերից հետո		308,716	1,435
Կոմիսիոն և այլ վճարների գծով եկամուտ	18	776,171	26,112
Կոմիսիոն և այլ վճարների գծով ծախսեր	18	(20,384)	(2,144)
Կոմիսիոն և այլ վճարների գծով զուտ եկամուտ		755,787	23,968
Արտարժույթային գործառնություններից զուտ (վնաս)/օգուտ		(23,598)	6
Այլ գործառնական եկամուտ		19,037	110
Անձնակազմի գծով ծախսեր	19	(308,604)	(54,224)
Վարչական և այլ գործառնական ծախսեր	19	(455,679)	(119,076)
Վաճ. համար պահվող ակտիվների վաճառքից վնաս		(2,049)	–
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկ		293,610	(147,781)
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	11	(58,000)	29,694
Ընդամենը հաշվետու տարվա շահույթ/(վնաս)		235,610	(118,087)
Այլ համապարփակ եկամուտ		–	–
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ/(վնաս)		235,610	(118,087)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն**2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ***(հազար ՀՀ դրամ)*

	Կանոնա- դրական կապիտալ (Ծան. 16)	Այլ պահուստ- ներ	Չբաշխված շահույթ / (Կուտակ- ված վնաս)	Ընդամենը սեփական կապիտալ
2017թ. հունիսի 23-ի դրությամբ	–	–	–	–
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համապարփակ վնաս	–	–	(118,087)	(118,087)
Բաժնետիրական կապիտալի համալրում	300,000	–	–	300,000
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	300,000	–	(118,087)	181,913
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համապարփակ եկամուտ	–	–	235,610	235,610
Բաշխում սեփականատիրոջը (18,691 հազար դրամ հետաձգված հարկից զուտ)	–	(93,456)	–	(93,456)
Բաժնետիրական կապիտալի համալրում	500,000	–	–	500,000
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	800,000	(93,456)	117,523	824,067

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ**

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2018թ.	2017թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսային եկամուտ		1,031,820	26,828
Ստացված կոմիսիոն և այլ վճարներ		776,171	21,605
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ		(20,384)	(2,144)
Վարչական և այլ գործառնական ծախսեր		(355,537)	(36,448)
Վճարված աշխատավարձ և հարակից հարկեր		(285,838)	(43,026)
Այլ եկամուտ		13,789	–
Դրամական միջոցների հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		1,160,021	(33,185)
<i>Գործառնական ակտիվների զուտ ավելացում</i>			
Հաճախորդներին տրված վարկեր		(5,105,368)	(985,899)
Վաճառքի համար պահվող ակտիվներ		(22,871)	–
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		(40,215)	–
Կանխավճարեր		(8,814)	–
Այլ ակտիվներ		17,111	(4,303)
Այլ պարտավորություններ		1,889	–
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված գործառնական գործունեությունում		(3,998,247)	(1,023,387)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(64,234)	(23,637)
Բանկում տեղաբաշխված ժամկետային ավանդ		(2,500,000)	–
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում		(2,564,234)	(23,637)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Մուտքեր ստացված վարկերից		6,355,644	800,000
Ստացված վարկերի գծով վճարված տոկոսագումար		(327,783)	(4,400)
Մուտքեր կանոնադրական կապիտալի համալրումից		500,000	300,000
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		6,527,861	1,095,600
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		1,530	6
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ		(33,090)	48,582
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին		48,582	–
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	5	15,492	48,582

(հազար ՀՀ դրամ)

1. Տեղեկատվություն ընկերության վերաբերյալ

(ա) Ընկերությունը և հիմնական գործունեությունը

«Մոզո» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն («Ընկերություն») հիմնադրվել է 2017թ. հունիսի 23-ին՝ որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

Ընկերության հիմնական գործունեությունն է՝ Հայաստանում ֆիզիկական անձանց արագ և հարմարավետ ծառայությունների մատուցումը, այն է՝ ավտոմեքենաների գրավադրմամբ վարկերի և ավտոմեքենաների ձեռքբերման համար վարկերի տրամադրումը՝ 350,000 ՀՀ դրամից մինչև 5,000,000 ՀՀ դրամ, մինչև վեց տարի տևողությամբ, ինչպես նաև 2018թ. նոյեմբերից սկսած «Մոզո Հիմա» վարկատեսակի տրամադրումը, առաջին վարկի համար՝ 30,000 ՀՀ դրամից մինչև 150,000 ՀՀ դրամ և 250,000 ՀՀ դրամ հետագա վարկավորման դեպքում: Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից: Ընկերությունը գործում է ՀՀ ԿԲ-ի կողմից 2017թ. հունիսի 23-ին տրված ունիվերսալ վարկային կազմակերպության N 42 լիցենզիայի հիման վրա:

2018թ. ընթացքում տեղի է ունեցել ընկերության բաժնետիրոջ փոփոխություն: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության միակ բաժնետերն է Լատվիայում գրանցված AS HUB 1 JSC-ը, որը հանդիսանում է Լատվիայում գրանցված Mogo Finance S.A. ընկերության դուստր ընկերությունը: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության միակ բաժնետերն էր Լատվիայում գրանցված AS ALPS INVESTMENTS JSC-ը: Ընկերության վերջնական վերահսկող անձը պարոն Այգարս Բեշենֆելսն է:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 6 մասնաճյուղ, որոնց միջոցով էլ իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վարդանանց փ. 18/2, գրասենյակներ 4,5 և 6: Ընկերության աշխատողների միջին թվաքանակը 2018թ. ընթացքում կազմել է 37 (2017թ. 7):

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի («ՀՀՄՍԽ») կողմից թողարկված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար (հազար ՀՀ դրամ), եթե այլ բան նշված չէ:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ամորտիզացված արժեքով:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր

Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

Ստորև նկարագրված են նոր հաշվապահական ստանդարտների կիրառման արդյունքում առաջացած փոփոխությունների էությունը և ազդեցությունը: 2018թ.-ին առաջին անգամ կիրառվում են որոշ այլ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք չեն ազդում Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

Ընկերությունը առաջին անգամ է կիրառում է ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտը:

ՖՀՄՍ 9 փոխարինում է ՀՀՄՍ 39 ստանդարտին 2018թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերությունը չի վերահաշվարկել ֆինանսական գործիքների գծով 2017թ. համեմատական տեղեկատվությունը ՖՀՄՍ 9-ի շրջանակներում: Հետևաբար, 2017թ. համեմատական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀՄՍ 39-ի համաձայն և համեմատելի չէ 2018թ. ներկայացված տեղեկատվության հետ: ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում առաջ եկած տարբերությունները էական չեն, հետևաբար, 2018թ. հունվարի 1-ի դրությամբ չբաշխված շահույթում ոչ մի ազդեցություն չի ճանաչվել:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ (շարունակություն)

(ա) *Դասակարգման և չափման գծով փոփոխություններ*

Ֆինանսական ակտիվների դասակարգումն ու չափումը որոշելու համար ՖՀՄՍ 9-ը պահանջում է, որ բոլոր ֆինանսական ակտիվները, բացառությամբ բաժնային և ածանցյալ գործիքների, գնահատվեն ակտիվների կառավարման և կազմակերպության պայմանագրային դրամական հոսքերի բնութագրման համար կազմակերպության բիզնես մոդելի համադրության հիման վրա:

Ֆինանսական ակտիվների (իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVPL), վաճառքի համար մատչելի (AFS), մինչև մարման ժամկետը պահվող և ամորտիզացված արժեքով չափվող) գնահատման դասակարգումը համաձայն ՀՀՄՍ 39-ի փոխարինվել է հետևյալ դասերով՝

- ▶ Ամորտիզացված արժեքով պարտքային գործիքներ,
- ▶ Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ (FVOCI), որոնց գծով ապաճանաչման պահին օգուտները կամ վնասները վերադասակարգվում են շահույթի կամ վնասի կազմ,
- ▶ Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ (FVOCI)՝ ապաճանաչման պահին առանց օգուտների և վնասների դասակարգման դեպի շահույթ կամ վնաս,
- ▶ Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը էապես չեն փոխվել՝ ՀՀՄՍ 39 ներկա պահանջների համեմատ:

Ընկերությունը գնահատել է վերոհիշյալ ֆինանսական ակտիվների վերաբերյալ իր մտադրությունները պորտֆելի և ֆինանսական գործիքի տեսակի հիման վրա և վերանայել իր նախկին փորձը՝ կապված վարկային պորտֆելի վաճառքի հետ:

Ընդհանուր առմամբ, ՖՀՄՍ 9-ի կիրառումից հետո, Ընկերությունը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ունեցել է հետևյալ պարտադիր կամ ընտրված դասակարգումը.

	ՀՀՄՍ 39-ով գնահատման դասակարգում			ՖՀՄՍ 9-ով գնահատման դասակարգում		
	<i>Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող</i>	<i>Ամորտիզացված արժեքով</i>	<i>Վաճառքի համար մատչելի</i>	<i>Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող</i>	<i>Ամորտիզացված արժեքով</i>	<i>Վաճառքի համար մատչելի</i>
Հաճախորդներին տրված վարկեր	–	970,784	–	–	970,784	–
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	–	48,582	–	–	48,582	–
Բանկերից ստացված վարկեր	–	805,878	–	–	805,878	–
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	–	91,734	–	–	91,734	–
Այլ պարտավորություններ	–	488	–	–	488	–

Այս վերադասակարգման արդյունքում հաշվապահական հաշվեկշռի ոչ մի կետի համախառն հաշվեկշռային արժեքների փոփոխություն տեղի չի ունեցել:

Համախառն հաշվեկշռային արժեքների փոփոխությունը լրացուցիչ արժեզրկման պահուստի արդյունք է: Ստորև ներկայացված են արժեզրկման վերաբերյալ նկատառումները:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ (շարունակություն)

(բ) Արժեզրկման հաշվարկի գծով փոփոխություններ

ՖՀՄՍ 9-ի ընդունումը փոխել է Ընկերության արժեզրկման հաշվառումը՝ փոխարինելով ՀՀՄՍ 39-ով նախատեսված կրած վնասների մոտեցումը հետագա ժամանակաշրջաններում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) մոտեցմամբ: ՖՀՄՍ 9-ի համաձայն Ընկերությունը գրանցում է վարկերի հնարավոր կորուստների պահուստ բոլոր վարկերի և այլ պարտքային ֆինանսական ակտիվների համար, որոնք չեն պահվում իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով, երաշխիքային պայմանագրերի հետ միասին:

Պահուստի հիմքում ընկած է հաջորդ տասներկու ամիսների հետ կապված ԱՎԿ-ն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տեղի է ունեցել վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո: Եթե ֆինանսական ակտիվը համապատասխանում է ձեռք բերված կամ ստեղծած արժեզրկված վարկի սահմանմանը (POCI), ապա պահուստը հիմնվում է ակտիվի կյանքի ընթացքում ԱՎԿ փոփոխության վրա:

ՖՀՄՍ 9-ի կիրառումից հետո Ընկերությունը ճանաչել է լրացուցիչ արժեզրկում Ընկերության հաճախորդներին տրված վարկերի գծով: ԱՎԿ-ի ազդեցությունը հաճախորդներին տրված վարկերի գծով գնահատվել է որպես ոչ էական:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

ՖՀՄՍ 15-ը, որը հրապարակվել է 2014թ.-ի մայիսին և փոփոխվել 2016թ.-ի ապրիլին, սահմանում է հինգ քայլերի մոդել՝ հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի հաշվառման համար: ՖՀՄՍ 15-ի համաձայն՝ հասույթը պետք է ճանաչվի փոխհատուցման գումարի չափով, որի նկատմամբ ընկերությունն ակնկալում է ստանալ իրավունք՝ հաճախորդին ապրանքներ և ծառայություններ փոխանցելու դիմաց: Սակայն ստանդարտը կիրառելի չէ ֆինանսական գործիքների և վճարների համար և, հետևաբար, ազդեցություն չունի Ընկերության հասույթի մեծ մասի վրա՝ ներառյալ տոկոսային եկամտի, որը կարգավորվում է ՖՀՄՍ 9-ով «*Ֆինանսական գործիքներ*»: Արդյունքում՝ նոր ստանդարտի ընդունումը ազդեցություն չունի Ընկերության հասույթի վրա 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Իրական արժեքի չափում

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Իրական արժեքով չափումը ենթադրում է, որ ակտիվի վաճառքը կամ պարտավորության փոխանցումը կատարվում է՝

- ▶ այդ ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում, կամ
- ▶ հիմնական շուկայի բացակայության դեպքում՝ տվյալ ակտիվի կամ պարտավորության համար ամենաբարենպաստ շուկայում:

Ընկերությունը պետք է հասանելի լինի հիմնական կամ ամենաբարենպաստ շուկան: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափվում է՝ կիրառելով այնպիսի ենթադրություններ, որոնք շուկայի այլ մասնակիցները կօգտագործեին ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը որոշելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները գործում են իրենց լավագույն տնտեսական շահերից ելնելով: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում շուկայի մասնակցի՝ տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը՝ ակտիվի առավել արդյունավետ և լավագույն օգտագործումից կամ այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավել արդյունավետ և լավագույն կերպով:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Իրական արժեքի չափում (շարունակություն)

Ընկերությունը օգտագործում է գնահատման մեթոդներ, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում և որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնին հասցնելով համապատասխան դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը և նվազագույնին հասցնելով ոչ դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը: Բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, որոնց իրական արժեքը չափվում կամ բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են ըստ ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիայի՝ ելնելով իրական արժեքի չափման համար եական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից՝

- ▶ 1-ին մակարդակ. ակտիվ շուկաներում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշումներ (չճշգրտված),
- ▶ 2-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար եական նշանակություն ունեցող առավելագույն ցածր մակարդակի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- ▶ 3-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար եական նշանակություն ունեցող առավելագույն ցածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք պարբերաբար ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում, Ընկերությունը դիտարկում է հիերարխիայի մակարդակների փոփոխության անհրաժեշտությունը՝ նորից վերլուծելով դրանց դասակարգումը (ելնելով իրական արժեքի չափման համար եական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչում և չափում

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները (բացառությամբ՝ հաճախորդներին տրված վարկերի) սկզբնապես ճանաչվում են գործարքի ամսաթվով, այսինքն՝ այն ամսաթվով, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Կանոնավոր կերպով գնմանը կամ իրացմանն են վերաբերում ֆինանսական ակտիվների այնպիսի գնումը կամ իրացումը, որը պահանջում է ակտիվի մատակարարում շուկայում գործող կարգավորման միջոցով կամ գործարար սովորույթով սահմանված ժամկետի ընթացքում: Հաճախորդներին տրված վարկերը ճանաչվում են միջոցները հաճախորդի հաշվին փոխանցվելուն պես:

Ֆինանսական գործիքների սկզբնական դասակարգումը կախված է նրանց բնութագրից և նպատակից, ինչպես նաև ձեռքբերման ժամանակ ղեկավարության մտադրությունից: Բոլոր ֆինանսական գործիքները սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի ծախսումները, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների:

Հետագա չափում

Հաճախորդներին տրված վարկերի հետագա չափումը կատարվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որով զեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհույքերը ֆինանսական գործիքի օգտագործման սպասվող ողջ ժամանակահատվածում կամ ավելի կարճ ժամանակահատվածում, որտեղ այն կիրառելի է, ճշգրտորեն բերվում են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության գուտ հաշվեկշռային արժեքին: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Ընկերության կողմից վճարումների կամ մուտքերի գնահատման վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ ֆինանսական ակտիվների համար կամ տոկոսային ծախս ֆինանսական պարտավորությունների համար:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է: Ընկերությունը ապաճանաչում է ակտիվները, երբ ակտիվները փոխանցվել են, և փոխանցումը բավարարում է ապաճանաչման պայմաններին:

Ընկերությունը փոխանցել է ակտիվը միմիայն, եթե

- ▶ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պայմանագրային իրավունքը, կամ
- ▶ Ընկերությունը պահպանել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը, բայց պարտավորություն է ստանձնել ամբողջությամբ և առանց էական ուշացման ստացված դրամական միջոցները երրորդ կողմին վճարել փոխանցման («pass-through») համաձայնությամբ:

Փոխանցման համաձայնությունները («pass-through») այն գործառնություններն են, երբ Ընկերությունը պահպանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պայմանագրային իրավունքները («սկզբնական ակտիվ»), բայց ենթադրում է պայմանագրային պարտավորություն՝ վճարելու այդ դրամական հոսքերը մեկ կամ մի քանի ընկերություններին («վերջնական ստացող»), երբ բավարարվում են այս երեք պայմանները:

- ▶ Ընկերությունը չունի որևէ պարտավորություն վճարել վերջնական ստացողներին, եթե չի հավաքագրել սկզբնական ակտիվին համարժեք գումար՝ բացառությամբ կազմակերպության կողմից տրված կարճաժամկետ կանխավճարների՝ տրամադրած գումարը և շուկայական դրույքաչափերով հաշվեգրված տոկոսները ամբողջությամբ վերականգնելու իրավունքով:
- ▶ Ընկերությունը չի կարող վաճառել կամ գրավադրել սկզբնական ակտիվը՝ բացառությամբ վերջնական ստացողներին դրամական հոսքերը վճարելու պարտավորության համար որպես ապահովություն հանդիսանալու դեպքերի:
- ▶ Ընկերությունը պետք է փոխանցի դրամական միջոցների ցանկացած հոսքեր, որոնք հավաքագրում է վերջնական ստացողների անունից՝ առանց էական ուշացման: Բացի այդ, Ընկերությունը իրավունք չունի վերաներդրել նման դրամական հոսքերը, բացառությամբ դրամական միջոցներում կամ դրանց համարժեքներում ներդրումների կարճաժամկետ հաշվարկային ժամանակահատվածում՝ հավաքագրման ամսաթվից մինչև վերջնական ստացողների համար պահանջվող փոխանցման ամսաթիվը, երբ այդ ներդրումների արդյունքում ստացված տոկոսները փոխանցվում են վերջնական ստացողներին:

Փոխանցումը համարվում է ապաճանաչման պայմաններին բավարարող, եթե.

- ▶ Ընկերությունը փոխանցել է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու օգուտները, կամ
- ▶ Ընկերությունը ո՛չ փոխանցել, ո՛չ պահպանել է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու օգուտները, բայց փոխանցել է ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Մոտեցումը ոչ էական փոփոխություններին (ՀՀՍՍ 39)

Ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, եթե Ընկերությունը վերանայում է վճարումների կամ ստացումների գնահատումները: Եթե ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի փոփոխումը չի հանգեցնում ապաճանաչման, փոփոխության գծով շահույթ / վնաս չի հաշվարկվում: Առաջացած ցանկացած ծախսեր կամ հիմնովին վճարները ճշգրտում են ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը: Ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերի փոփոխությունների գուտ ներկա արժեքը ամորտիզացվում է փոփոխված ակտիվի մնացորդ ժամկետի ընթացքում վերանայված ԱՏ-ի միջոցով:

Ֆինանսական գործիքներ – սկզբնական ճանաչում ըստ ՀՀՍՍ 39-ի (կիրառելի է մինչև 2018թ. հունվարի 1-ը)

Ճանաչման ամսաթիվ

Հաճախորդներին տրված վարկերը ճանաչվում են միջոցները հաճախորդի հաշվին փոխանցվելուն պես: Այլ ակտիվները ճանաչվում են այն ամսաթվին, երբ Ընկերությունը կնքում է ֆինանսական գործիքներ առաջացնող պայմանագիր :

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Ֆինանսական գործիքների սկզբնական չափում

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից, ինչպես նկարագրված է հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների: Այլ դեբիտորական պարտքերը չափվում են գործարքի գնով:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

2018թ. հունվարի 1-ից, Ընկերությունը չափում է հաճախորդներին տրված վարկերը, դրամական միջոցների համարժեքները և այլ դեբիտորական պարտքերը ամորտիզացված արժեքով միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- ▶ Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով,
- ▶ Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունն իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույն կերպով արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որոշեցրած մեթոդները – բիզնես մոդելի արդյունավետության (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների) վրա ազդող ռիսկերը, մասնավորապես, այդ ռիսկերի կառավարման մեխանիզմները: Վաճառքների ակնկալվող հաճախականությունը, արժեքը և ժամկետները նույնպես հանդիսանում են Ընկերության գնահատման կարևոր գործոններ: Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամտորեն ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում կազմակերպության սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, կազմակերպությունը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայի համար հաշվի է առնում այդ տեղեկատվությունը նոր առաջացող կամ նոր ձեռք բերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս: Գնահատված ֆինանսական մոդելը միտված է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով:

Միայն մայր գումարի և տոկոսի վճարման (SPPI) գնահատումներ

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին: Այս գնահատման նպատակով, մայր գումար հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ վարձատրության/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պարտավորվածության մեջ սովորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են՝ փողի ժամանակային արժեքը և վարկային ռիսկը: Ընկերությունը կատարել է SPPI գնահատումը և գնահատել է իր ֆինանսական ակտիվները որպես համապատասխան SPPI չափանիշներին:

Ֆինանսական ակտիվներ վերադասակարգում

2018թ. հունվարի 1-ից Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները, բացառությամբ դեպքերի, երբ Ընկերությունը ձեռք է բերում, օտարում է կամ դադարեցնում է բիզնես վարքագիծ:

Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում: Ընկերությունը չի վերադասակարգել իր ֆինանսական ակտիվները և պարտավորությունները 2018 և 2017 թթ.-ին:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների ապահանաչումը

Ստորև նշված պահուստների ապահանաչումը կիրառվում է բոլոր ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների նկատմամբ:

Ապահանաչում պայմանների էական փոփոխության պատճառով

Ընկերությունը ապահանաչում է հաճախորդին տրված վարկը, երբ պայմանները այնպես են վերանայվել, որ այն դարձել է հիմնովին նոր վարկ, և տարբերությունը ճանաչվում է որպես ապահանաչումից օգուտ կամ վնաս այն չափով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի ճանաչվել: Նոր ճանաչված վարկերը ԱՎԿ-ի չափման նպատակով դասակարգվում են 1-ին փուլում, քանի դեռ նոր վարկը չի համարվում ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (ՍՈՑԻ):

Երբ Ընկերությունը գնահատում է՝ արդյոք պետք է ապահանաչել ֆինանսական ակտիվը, թե ոչ, հաշվի է առնում հետևյալ որակական գործոնները՝

- ▶ վարկի արժույթի փոփոխություն,
- ▶ գործընկերոջ փոփոխություն,
- ▶ եթե փոփոխությունը այնպիսին է, որ գործիքը այլևս չի համապատասխանում SPPI չափանիշին,
- ▶ արդյոք իրավական պարտավորությունները մարվել են:

Բացի այդ, Ընկերությունը հաճախորդներին տրված վարկերի համար հատուկ հաշվի է առնում փոփոխությունների նպատակը: Գնահատումը կայանում է ըստ նրա, թե փոփոխությունը տեղի է ունեցել գործառնական, թե վարկերի վերակառուցման պատճառներով: Փոփոխության պատճառը համարվում է գործառնական, եթե կազմակերպության DPD-ն (ժամկետանց օրերը) պայմանների փոփոխությունից անմիջապես առաջ 5 DPD-ից պակաս է: Նման դեպքերում համապատասխան փոփոխությունը համարվում է իրականացված գործառնական նպատակներով, որը հանգեցնում է սկզբնական վարկի գծով ստացվելիք գումարի ապահանաչմանը:

Ակնկալվող վարկային կորուստների սկզբունքներ համաձայն ՖՀՄՍ 9-ի

ՖՀՄՍ 9-ի ընդունմամբ փոխվել է Ընկերության կողմից վարկերի արժեզրկման հաշվառումը. ՀՀՄՍ 39-ով նախատեսված կրած վնասների մոտեցումը փոխարինվել է հետագա ժամանակաշրջաններում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) մոտեցմամբ: 2018թ. հունվարի 1-ից Ընկերությունը ճանաչում է պահուստներ ակնկալվող վարկային կորուստների գծով բոլոր վարկերի և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող այլ պարտքային ֆինանսական ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի պայմանագրերի համար (այս բաժնում բոլորը, դիտարկել որպես «ֆինանսական գործիքներ»):

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային վնասների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային վնաս կամ ԱՎԿԱՎԿ), եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, որի դեպքում պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային վնասի վրա (12ամԱՎԿ), ինչպես նշված է ստորև: Ընկերության վարկային ռիսկի զգալի աճի առկայությունը որոշելու համար նախատեսված քաղաքականությունը ներկայացված է ստորև:

12ամԱՎԿ-ը ԱՎԿԱՎԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում:

Ինչպես ԱՎԿԱՎԿ-ն, այնպես էլ 12ամԱՎԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ակնկալվող վարկային կորուստների սկզբունքներ համաձայն ՖՀՄՍ 9-ի (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումը (ըստ ՖՀՄՍ 9-ի)

Վարկային վարկանիշի սահմանումը

Ընկերության հիմնական բիզնես ակտիվները՝ հաճախորդներին տրված վարկերը, մանրածախ բնույթ են կրում, ուստի խմբավորված են ըստ տեսակների, խմբային հիմունքով ԱՎԿ-ի հաշվարկի համար, որը հիմնականում հիմնված է DPD-ի (ժամկետանց օրեր) վրա: Ընկերությունը վերլուծում է հաճախորդներին տրված վարկերի իր պորտֆելը՝ այն բաժանելով դասերի ըստ յուրաքանչյուր վարկի ժամկետանց օրերի չափանիշի:

Ընկերությունը մշտապես վերահսկում է ԱՎԿ-ի ենթակա բոլոր ակտիվները: Որոշելու համար, արդյոք գործիքը կամ գործիքների պորտֆելը ենթակա է 12ամսվա-ի կամ ԱՎԿ-ի, Ընկերությունը գնահատում է, թե արդյոք տեղի է ունեցել վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո: Մի շարք նմանատիպ ակտիվների համար խմբային հիմունքով ԱՎԿ գնահատելիս Ընկերությունը կիրառում է նույն սկզբունքները գնահատելու համար, թե արդյոք եղել է վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո երկրի ներսում գտնվող պորտֆելների մեջ՝ հիմնվելով վարկային տեսակի վրա:

Ընկերությունը բաժանում է հաճախորդներին տրված վարկերը հետևյալ դասերի՝

- 1) ոչ ժամկետանց,
- 2) մինչև 30 օր ժամկետանց,
- 3) 31-60 օր ժամկետանց,
- 4) 60 օրից ավել ժամկետանց:

Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Ընկերությունը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

- ▶ **Փուլ 1:** Սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: Ընթացիկ կամ մինչև 30 օր ժամկետանց վարկերը դիտարկվում են Փուլ 1-ում: Մինչ նախկինում Փուլ 2 դասակարգված վարկերի Փուլ 1 տեղափոխումը, սահմանվում է 1 ամիս տևողությամբ վերականգնման շրջան, և այդ վարկը պետք է համապատասխանի վերոնշյալ ընդհանուր Փուլ 1 ժամկետանց օրերի չափանիշին: Ազդեցությունները դասակարգվում են փուլ 1-ից դուրս, եթե դրանք այլևս չեն համապատասխանում վերը նշված չափանիշներին:
- ▶ **Փուլ 2:** Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Ընկերությունը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) համար: Ընկերությունը դասակարգում է 31-60 օր ժամկետանց դասին պատկանող վարկերը Փուլ 2 դասին: Վարկերը մնում են Փուլ 2-ում 1 ամիս տևողությամբ վերականգնման շրջանի ընթացքում, նույնիսկ եթե հակառակ դեպքում բավարարեին Փուլ 1-ի չափանիշներին այդ ժամանակահատվածում:
- ▶ **Փուլ 3:** Վարկերը համարվում են արժեզրկված: Ընկերությունը ձևակերպում է ԱՎԿ պահուստ: Ընկերությունը համարում է, որ վարկի գծով առկա է դեֆոլտ, և, հետևաբար, այն դասում է Փուլ 3-ին, բոլոր այն դեպքերում, երբ փոխառումն 60 օրով ուշացնում է պայմանագրային վճարումների կատարումը: Վարկերը մնում են Փուլ 3-ում 1 ամիս տևողությամբ վերականգնման շրջանի ընթացքում, նույնիսկ եթե հակառակ դեպքում վերականգնվելին Փուլ 2-ի չափանիշներին այդ ժամանակահատվածում:

ԱՎԿ-ների հաշվարկը

Ընկերությունը ԱՎԿ-ն հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու ակնկալվող դրամական միջոցների պակասորդները, զեղչված ԱՏ-ի մոտարկմամբ: Դրամական միջոցների պակասորդը կազմակերպությանը պայմանագրով վճարման ենթակա դրամական միջոցների հոսքերի և կազմակերպության ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունն է:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ակնկալվող վարկային կորուստների սկզբունքներ համաձայն ՖՀՄՍ 9-ի (շարունակություն)

ԱՎԿ հաշվարկի մեխանիզմները ներկայացված են ստորև, որոնց հիմնական տարրերը հետևյալն են՝

- ▶ *Դեֆոլտի հավանականությունը* որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է:
- ▶ *Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը* դա ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ:
- ▶ *Դեֆոլտի դեպքում կորստի չափը* դա դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրով սահմանված դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Այն սովորաբար արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս:

Վարկային կորուստների որոշման առավելագույն ժամկետը ֆինանսական գործիքի պայմանագրային ժամկետն է:

PD-ի և LGD-ի որոշման համար կիրառված կարևոր դատողությունները նկարագրված են Ծանոթագրություն 4-ում:

ԱՎԿ մեթոդի մեխանիզմը ամփոփված է ստորև.

- ▶ **Փուլ 1:** 12ամս ԱՎԿ-ն հաշվարկվում է որպես ԱՎԱՎԿ-ների այն մասը, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում:
 Ընկերությունը հաշվարկում է 12ամս ԱՎԿ-ի արժեքի մասն գծով պահուստը՝ հիմնվելով հաշվետու ամսաթվին հաջորդող 12 ամիսների ընթացքում ակնկալվող դեֆոլտի տեղի ունենալուն:
 Այս ակնկալվող 12-ամսյա դեֆոլտի հավանականությունները կիրառվում են կանխատեսված EAD-ում և բազմապատկվում ակնկալվող LGD-ով ու գեղջվում մինչև մոտավոր ԱՏ-ը:
- ▶ **Փուլ 2:** Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Ընկերությունը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԱՎԿ) համար: Մեխանիզմները նման են վերոնշյալին, ներառյալ բազմաթիվ սցենարների օգտագործումը, սակայն PD-ները և LGD-ները գնահատվում են գործիքի կյանքի ընթացքում: Ակնկալվող դրամական միջոցների պակասորդները գեղջվում են սկզբնական ԱՏ-ի մոտարկմամբ:
- ▶ **Փուլ 3:** Արժեքով համարվող վարկերի համար, Ընկերությունը ճանաչում է կյանքի ընթացքում ակնկալվող վարկային վնաս: Մեթոդը նման է փուլ 2-ում ակտիվների նկատմամբ կիրառվող մեթոդին, որտեղ դեֆոլտի հավանականությունը 100% է:

Ֆինանսական ակտիվների արժեքի կարկերից

Հետևյալ ֆինանսական ակտիվների համար Ընկերությունը հաշվարկում է ԱՎԿ անհատական կամ կոլեկտիվ հիմունքներով՝

- ▶ Դեբիտորական պարտքեր,
- ▶ Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- ▶ Ֆինանսական երաշխիքներ:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքների արժեքի կարկեր

Դրամական միջոցներ և դրանց համարժեքների համար դեֆոլտը դիտարկվում է, երբ այն անցնում է պայմանագրային բանկային հաշվարկի ժամանակացույցից, այսինքն, մի քանի օրից:

Հետևաբար, անցումը կատարվում է փուլ 1-ից փուլ 3, հաշվի առնելով օրերի փոքր քանակը, որ պետք է ազդի որպես փուլ 3 դասակարգմանը, ինչը նշանակում է դեֆոլտ: Դրամական միջոցների և դրանց համարժեքների համար 2-րդ փուլը չի կիրառվում, քանի որ ցանկացած ժամկետանց օր կարող է առաջացնել դեֆոլտ:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների արժեզրկում, բացի վարկերից (շարունակություն)

Ֆինանսական երաշխիքներ

Երաշխիքները, որոնք վարկային պայմանագրի անբաժանելի մաս չեն, հաշվառվում են որպես ԱՎԿ-ի ենթակա հաշվի առանձին միավորներ: Այդ նպատակով Ընկերությունը գնահատում է ԱՎԿ-ները՝ հիմնվելով ակնկալվող վճարումների արժեքի վրա, որպեսզի փոխհատուցի օգտատիրոջ հնարավոր վարկային վնասը: ԱՎԿ-ները հաշվարկվում են անհատական հիմունքով:

ԱՎԿ-ի արժեզրկման գծով պահուստը հիմնված է երաշխիքի ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների առաջացման վրա, քանի դեռ վարկային ռիսկի զգալի աճ տեղի չի ունեցել, որի դեպքում արժեզրկման գծով պահուստը հիմնված է 12ամս ԱՎԿ-ի վրա: Ընկերության՝ վարկային ռիսկի զգալի աճի վերաբերյալ քաղաքականությունը և դատողությունները ներկայացված է Ծանոթագրություն 4-ում:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունների հաշվառման քաղաքականությունը ՖՀՄՍ 9-ի ներդրումից էական փոփոխության չի ենթարկվել:

Սկզբնական ճանաչում և չափում

Ֆինանսական պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություններ՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, վարկեր և փոխառություններ, կրեդիտորական պարտքեր:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի, փոխառությունների և կրեդիտորական պարտավորությունների դեպքում՝ հանած ուղղակիորեն վերագրելի գործարքների հետ կապված ծախսումներ:

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են կրեդիտորական և այլ պարտավորություններ, վարկեր և փոխառություններ:

Հետագա չափում

Վարկեր և փոխառություններ

Այս դասը առավել համապատասխանում է Ընկերությանը: Սկզբնական ճանաչումից հետո տոկոսակիր վարկերն ու փոխառությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի (ԱՏ) մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ պարտավորություններն ապաճանաչվում են, ինչպես նաև արդյունավետ տոկոսադրույքով ամորտիզացնելիս:

Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ցանկացած զեղչ կամ հավելավճար, ինչպես նաև վճարներ կամ ծախսումներ, որոնք հանդիսանում են ԱՏ-ի բաղկացուցիչ մաս:

ԱՏ-ով հաշվարկված ամորտիզացիան ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական ծախսեր հոդվածում:

Ապաճանաչում

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է: Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է նույն վարկատուի կողմից էապես տարբեր պայմաններով կամ առկա պարտավորության պայմանները էապես փոփոխվում են, նման փոխանակումը կամ փոփոխումը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ընկերությունը փոփոխությունը համարում է էական՝ ելնելով որակական հատկանիշներից, և եթե այն հանգեցնում է ճշգրտված զեղչված ներկա արժեքի և ֆինանսական պարտավորության սկզբնական արժեքի միջև ավելի քան, տաս տոկոսի տարբերության:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Վարձակալություն

Գործառնական վարձակալություն՝ Ընկերությունը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի կողմից, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով վարձավճարները հավասարաչափ ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են այլ գործառնական ծախսերում:

Գործառնական վարձակալություն՝ Ընկերությունը որպես վարձատու

Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացնում է գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվը՝ ըստ ակտիվի բնույթի: Գործառնական վարձակալությունից ստացվող վարձակալական եկամուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալներին տրամադրված զեդչերի համախառն գումարը արտացոլվում է որպես վարձակալությունից եկամտի նվազեցում՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության պայմանագրի հետ կապված սկզբնական ուղղակի ծախսումները ավելացվում են վարձակալության առարկա հանդիսացող ակտիվի հաշվեկշռային արժեքին:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները բանկերում:

Արձակուրդի գծով պահուստ

Արձակուրդի գծով պահուստը հաշվարկվում է՝ աշխատակցի նախորդ տասներկու ամիսների միջին օրական աշխատավարձն ու այլ վճարները բազմապատկելով հաշվետու ֆինանսական ժամանակաշրջանի վերջի դրությամբ չօգտագործված արձակուրդային օրերի թվով:

Հաշվեգրում և հետաձգում

Հաշվեգրումները և հետաձգումները հաշվառվում են հասույթը և ծախսերը ստանալու կամ իրականացնելու պահին ճանաչելու համար:

Պայմանական պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, սակայն բացահայտվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման համար միջոցների արտահոսքը համարվում է քիչ հավանական: Պայմանական ակտիվը չի ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, սակայն բացահայտվում է, երբ տևտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտները ճանաչվում են այն չափով, որքանով հավանական է, որ տևտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և այդ եկամուտները հնարավոր է արժանահավատորեն չափել: Հետևյալ ճանաչման չափանիշները նույնպես պետք է բավարարվեն նախքան եկամտի ճանաչումը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Եկամուտների և ծախսերի ճանաչում (շարունակություն)

Տոկոսային և նմանատիպ եկամուտ և ծախս

Ամորտիզացված արժեքով չափվող բոլոր ֆինանսական գործիքների գծով տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվառվում է արդյունավետ տոկոսադրույքով: Արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որով զեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի օգտագործման սպասվող ողջ ժամանակահատվածում ճշգրտորեն բերվում են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքին:

Հաշվարկը հաշվի է առնում ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային դրույթները և ներառում է ցանկացած վճար կամ հավելյալ ծախսեր, որոնք ուղղակիորեն վերաբերում են ֆինանսական գործիքին և կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, սակայն ոչ ապագա վարկային կորուստները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, եթե Ընկերությունը վերանայում է վճարումների կամ ստացումների գնահատականները: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա և հաշվեկշռային արժեքի փոփոխությունը գրանցվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Արժեզրկումից կորստի պատճառով ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի արժեքի նվազման դեպքում տոկոսային եկամուտը շարունակվում է ճանաչվել՝ կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Եկամուտ պարտքերի հավաքագրումից և վաստակած տույժերից

Պարտքերի հավաքագրումից և ստացված տուգանքներից եկամուտը ճանաչվում է Ընկերության ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակ, երբ ծառայությունների վճարման հավանականությունը մեծ է, հետևաբար, եկամուտը ճանաչվում է՝ հաճախորդից դրամական միջոցները ստանալու պահին:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Համաձայն ՖՀՄՍ 9-ի և ՀՀՄՍ 39-ի ամորտիզացված արժեքով չափվող բոլոր ֆինանսական գործիքների գծով տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվառվում է արդյունավետ տոկոսադրույքով: Արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որով զեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի օգտագործման սպասվող ողջ ժամանակահատվածում ճշգրտորեն բերվում են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքին: Հաշվարկը հաշվի է առնում ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային դրույթները և ներառում է ցանկացած վճար կամ հավելյալ ծախսեր, որոնք ուղղակիորեն վերաբերում են ֆինանսական գործիքին և կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, սակայն ոչ ապագա վարկային կորուստները:

Երբ ֆինանսական ակտիվը արժեզրկվում է և դասվում Փուլ 3-ում, Ընկերությունը հաշվարկում է տոկոսային եկամուտը՝ կիրառելով ԱՏ ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքը: Եթե ֆինանսական ակտիվը վերականգնվում է և այլևս չի համարվում արժեզրկված, Ընկերությունը կրկին վերադառնում է տոկոսային եկամտի հաշվառմանը համախառն հիմունքով:

Հատույթ վաճառքից

Ավտոմեքենաների վաճառք

Ընկերությունն իր այլ եկամտի մի մասը ստանում է օգտագործված տրանսպորտային միջոցների վաճառքից, որոնք բռնագանձվում են չսպասարկվող վարկ ունեցող հաճախորդներից: Ընկերությունը հաշվարկում է նվազագույն վաճառքի գինը՝ ելնելով սկզբնական արժեքից կամ բռնագանձման արժեքից՝ ավելացված հավելյալ ծախսեր (օրինակ՝ վերանորոգում) և գործարքի արդյունքում շահույթ ստանալու համար հավելվածար: Պայմանագրային պարտավորությունը համարվում է կատարված, երբ մեքենան գրանցվում է հաճախորդի անունով:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ հարկի այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միավորներին կամ ուղղակիորեն կապիտալում ճանաչված՝ բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ ուղղակիորեն կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ գուղվի, որը չի նվազեցվում հարկային նպատակներով, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում, որոնք ազդեցություն չունեն ո՛չ հաշվապահական, ո՛չ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև այն դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող ժամանակավոր տարբերություններ, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր հարկային տարբերությունները:

Հիմնական միջոցներ

Սկզբնական ճանաչման ժամանակ հիմնական միջոցները արտացոլվում են սկզբնական արժեքով առանց ամենօրյա սպասարկման ծախսերի՝ հանած կուտակված մաշվածությունն ու արժեզրկումից կուտակված վնասները: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին:

Մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ ակտիվը պատրաստ է օգտագործման համար: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ ակտիվների ներքոնշյալ օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում՝

	<u>Տարի</u>
Համակարգչային տեխնիկա	3
Կահույք և պարագաներ	5
Տրանսպորտային միջոցներ	5
Վարձակալած միջոցների բարելավում	4
Այլ հիմնական միջոցներ	2

Վարձակալած միջոցների բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հիմնական միջոցներ (շարունակություն)

Ակտիվի մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ այն պատրաստ է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այն վայրում և այնպիսի վիճակում, որն անհրաժեշտ է հիմնական միջոցը ընկերության ղեկավարության նախասնշած նպատակով օգտագործելու համար: Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերանայվում է արժեզրկման տեսանկյունից այն դեպքում, երբ առաջանում են դեպքերի կամ իրավիճակների այնպիսի փոփոխություններ, որոնք վկայում են, որ այդպիսի ակտիվների արժեքը, հնարավոր է, որ չի փոխհատուցվի: Եթե կա նման հայտանիշ, և եթե առկա հաշվեկշռային արժեքը գերազանցում է գնահատված փոխհատուցվող գումարը, այս ակտիվների կամ դրամաստեղծ միավորների գումարները նվազեցվում են մինչև փոխհատուցվող գումարի չափ: Սարքավորման փոխհատուցվող գումարը ակտիվի գույն վաճառքի գնից և օգտագործման արժեքից առավելագույն գումարն է: Օգտագործման արժեքը գնահատելիս կանխատեսվող ապագա դրամական հոսքերը գեղչվում են մինչև ներկա արժեք՝ օգտագործելով նախքան հարկերը գեղչման դրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակի արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այն ակտիվի համար, որոնք չեն գնեցրացնում զգալի չափով անկախ դրամական ներհոսքեր, փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է ակտիվը: Արժեզրկման կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկման հոդվածում:

Հիմնական միջոցի միավորը ապաճանաչվում է, երբ այն օտարվում է կամ ապագա ոչ մի տնտեսական օգուտ դրա շարունակական օգտագործումից չի ակնկալվում: Հիմնական միջոցների միավորի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ վնասը, հաշվարկված որպես ակտիվի իրացումից գույն մուտքերի և հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, ներառվում է այն տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ, որի ընթացքում այն ապաճանաչվել է:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրեր և լիցենզիաներ:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները նախնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով: Ոչ նյութական ոչ ընթացիկ ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով և ամորտիզացվում են օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում ուղիղ գծային մեթոդով: Ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները վերանայվում են արժեզրկման տեսանկյունից, երբ իրադարձությունները կամ հանգամանքների փոփոխությունները ցույց են տալիս, որ հաշվեկշռային արժեքը չի կարող փոխհատուցվել: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են, երբ ոչ նյութական ոչ ընթացիկ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրանց փոխհատուցվող գումարը:

Ամորտիզացիան հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության հետևյալ գնահատված ժամկետների ընթացքում:

	<u>Տարի</u>
Համակարգչային ծրագրեր	10
Լիցենզիա	1
Այլ ոչ նյութական ակտիվներ	1, 3, 10

Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտավորություն որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և այդ պարտավորությունը կարելի է արժանահավատորեն չափել:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական երաշխիքների գծով պահուստներ

Եթե պայմանագիրը համապատասխանում է ֆինանսական երաշխիքի պայմանագրի սահմանմանը, ապա ՇՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ, որպես թողարկող, կիրառում է ՖՀՄՍ 9-ի հաշվապահական հաշվառման և չափման հատուկ պահանջները: Այս ՖՀՄՍ 9-ի չափման պահանջները կիրառվում են բոլոր երաշխիքային պայմանագրերի համար, ներառյալ ընդհանուր հսկողության տակ գտնվող կազմակերպությունների միջև երաշխիքները, ինչպես նաև դուստր կազմակերպության կողմից մայր ընկերության անունից տրված երաշխիքները: Եթե ընկերությունը տալիս է երաշխավորություն ընդհանուր հսկողության ներքո գտնվող ընկերության անունից, ապա համապատասխան պահուստը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում: Եթե գործարքը իրականացվել է ընկերության բաժնետերերի կողմից՝ որպես սեփականատեր, ՇՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ նման գործարքները հաշվառում է որպես ֆինանսական երաշխիքների պահուստների ավելացում և կապիտալի հավասար և հակառակ նվազում (որպես կապիտալի բաշխում): Ֆինանսական երաշխիքների հիման վրա սեփական կապիտալի բաշխումը ճանաչվում են «Այլ պահուստներում»:

Ֆինանսական երաշխիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետևաբար, եթե ֆինանսական երաշխիքի պայմանագիրը սկզբնապես չի դիտարկվել որպես իրական արժեքով շահույթ/վնասի միջոցով չափվող, ապա յուրաքանչյուր երաշխիքի գծով ընկերության պարտավորությունը չափվում է սկզբնական արժեք հանած համապարփակ ֆինանսական արդյունքներում կուտակված ամորտիզացիայից և ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված ԱՎԿ պահուստից առավելագույնով: Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ այլ գործառնական եկամուտներում երաշխիքի ժամկետի ընթացքում գծային հավասարաչափ մեթոդով:

Ֆինանսական երաշխիքները ապաճանաչվում են, եթե երաշխիքի պայմանները զգալիորեն փոխվում են: Երաշխիքի սահմանաչափերում փոփոխությունները հաշվառվում են որպես ապաճանաչում: Նման դեպքերում սկզբնական երաշխիքը ապաճանաչվում է, և նոր երաշխիքը ճանաչվում է իրական արժեքով: Իրական արժեքի փոփոխությունը ճանաչվում է որպես «Ֆինանսական երաշխիքների պահուստների» նվազեցում կամ ավելացում և նույն կերպ հանդիպական նվազում կամ ավելացում «Այլ պահուստներում»: Ֆինանսական երաշխիքների ներքո ստանձնած պարտավորությունների մարմանը զուգընթաց այլ պահուստները փոխանցվում են կուտակված շահույթին:

Վաճառքի համար պահվող ակտիվներ

ՇՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ դասակարգում է ոչ ընթացիկ ակտիվները և օտարման ենթակա խմբերը, որպես վաճառքի համար պահվող, եթե իրենց հաշվեկշռային արժեքները փոխհատուցվում են հիմնականում վաճառքի միջոցով, քան թե շարունակական օգտագործման:

Վաճառքի համար պահվող ակտիվները ներառում են այնպիսի տրանսպորտային միջոցներ, որոնք ձեռք են բերվում բռնագրավման միջոցով, եթե հաճախորդները չեն կատարում վարկային պայմանագրերը: Այսպիսի բռնագրավված գրավի առարկաները դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող և չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերից (FVLCTS) նվազագույնով: Վաճառքի ծախսերը լրացուցիչ ծախսեր են, որոնք ուղղակիորեն վերագրվում են ակտիվի վաճառքին, առանց ֆինանսական ծախսերի և շահութահարկի:

Որպես վաճառքի համար պահվող դասակարգման չափանիշները համարվում են բավարարված միայն այն դեպքում, երբ վաճառքը շատ հավանական է, և ակտիվը պատրաստ է անմիջապես վաճառելու իր ներկա վիճակում:

Վաճառքի իրականացման համար անհրաժեշտ գործողությունները պետք է ցույց տան, որ հավանական չէ, որ վաճառքի հետ կապված նշանակալի փոփոխություններ տեղի կունենան կամ վաճառքի իրականացման որոշումը կչեղարկվի: Ղեկավարությունը պետք է պարտավորված լինի ակտիվի վաճառքի պլանով, և վաճառքը նախատեսում է ավարտել դասակարգման ամսաթվից մեկ տարվա ընթացքում:

Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են առանձին որպես ընթացիկ ակտիվներ:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Աշխատակիցների գծով հատուցումներ

Աշխատավարձերը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարումները, տարեկան վճարվող արձակուրդը, անաշխատունակության դիմաց վճարները, պարգևավճարները և ոչ դրամական վարձատրությունները հաշվեգրվում են այն տարում, որում համապատասխան ծառայությունները մատուցվել են Ընկերության աշխատակիցների կողմից: Աշխատակիցները ստանում են թոշակներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից օրենսդրությանը համապատասխան: Վճարումները պետական բյուջե կատարվում են Ընկերության կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով և դրույքաչափերով: Այդ վճարումները ճանաչվում են որպես ծախս առաջացման պահին:

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և հայեցողական շահաբաժինների չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Բաժնետոմսերի թողարկմանն ուղղակիորեն վերագրելի արտաքին ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորումների, ճանաչվում են որպես կապիտալի նվազեցում: Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավելի վճարվող ցանկացած գումար ճանաչվում է որպես Էմիսիոն եկամուտ:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են և նման որոշումը կիրառելի է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Արտարժույթային փոխարկումներ

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Արտարժույթով գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով՝ փոխարկված կիրառելի գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթային փոխարկումներից օգուտը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, որպես արտարժույթային գործարքներից զուտ օգուտ կամ վնաս՝ փոխարկման տարբերություններ: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային հողվածները, որոնք չափվում են պատմական արժեքով, վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի սկզբնական գործարքի ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային հողվածները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքն է 553.65 ՀՀ դրամ 1 եվրոյի համար (2017թ.՝ 580.1 ՀՀ դրամ 1 եվրոյի համար):

Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Թողարկված, բայց մինչև Ընկերության ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթիվը ուժի մեջ չմտած ստանդարտները ներկայացված են ստորև: Ընկերությունը նախատեսում է կիրառել այդ ստանդարտներն այն ժամանակ, երբ դրանք ուժի մեջ կմտնեն: Որոշ այլ թողարկված, բայց ուժի մեջ չմտած ստանդարտներ, որոնք ներկայացված չեն ստորև, կիրառելի չեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների համար:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

ՖՀՄՍ 16 Վարձակալություն

2018թ. հունվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 16-ը, որը փոխարինում է ՀՀՄՍ 17-ին «Վարձակալություն», ՖՀՄՍ 4-ին «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՍԿ 15-ին «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՍԿ 27-ին «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատում»: ՖՀՄՍ 16-ը սահմանում է վարձակալությունների ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները և պահանջում է վարձակալից հաշվառել բոլոր վարձակալությամբ ստացած ակտիվները միասնական հաշվապահական հաշվեկշռի մոդելով, ՀՀՄՍ 17-ի ֆինանսական վարձակալության հաշվառման նմանությամբ: Ստանդարտը նախատեսում է երկու տեսակի բացառություն վարձակալի համար՝ ցածրարժեք ակտիվների (օր.՝ անձնական համակարգիչներ) և կարճաժամկետ (12 ամսից պակաս ժամկետով) վարձակալության պարագայում: Վարձակալության սկսվելու օրվանից վարձակալը պետք է ճանաչի պարտավորություն վարձավճարների գծով (վարձակալական պարտավորություն) և ակտիվ, որը ներկայացնում է վարձակալված ակտիվի օգտագործման իրավունքը վարձակալության ողջ ընթացքում (օր.՝ ակտիվի օգտագործման իրավունք): Վարձակալը պետք է առանձին ճանաչի վարձակալական պարտավորության գծով տոկոսային ծախսը և ակտիվի օգտագործման իրավունքի մաշվածության ծախսը:

Վարձակալական պարտավորության չափը պետք է վերանայվի որոշակի իրադարձությունների ի հայտ գալու պարագայում (օր.՝ վարձակալության ժամանակահատվածի փոփոխություն, ապագա վարձավճարների փոփոխություն՝ կապված վարձավճարի չափի որոշման համար օգտագործվող ինդեքսի կամ դրույքի փոփոխության հետ): Վարձակալը հիմնականում կճանաչի վարձակալական պարտավորության վերաչափման գումարը՝ որպես ակտիվի օգտագործման իրավունքի ճշգրտում:

ՖՀՄՍ 16-ով վարձատուների կողմից հաշվառումը զգալիորեն չի փոխվել ներկայիս ՀՀՄՍ 17-ի համեմատ: Վարձատուները կշարունակեն դասակարգել բոլոր վարձակալությունները՝ օգտագործելով ՀՀՄՍ 17-ի դասակարգման սկզբունքները, և առանձնացնել վարձակալության երկու տեսակ՝ գործառնական և ֆինանսական վարձակալություններ:

ՖՀՄՍ 16-ը գործում է 2019թ. սկսվող կամ հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար և պահանջում է վարձակալներին և վարձատուներին կատարել ավելի ընդարձակ բացահայտումներ, քան ՀՀՄՍ 17-ի դեպքում:

Ընկերությունը նախատեսում է ՖՀՄՍ 16-ին անցումն իրականացնել հետընթաց մոտեցմամբ՝ նախնական կիրառման ամսաթվին ճանաչված ՖՀՄՍ 16-ի կիրառման կուտակային ազդեցությամբ: Ընկերությունը կիրառելու է ստանդարտը այն պայմանագրերին, որոնք նախկինում նույնացվել են որպես ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 4-ի կիրառմամբ վարձակալության պայմանագրեր: Ընկերությունը, հետևաբար, չի կիրառի ստանդարտը այն պայմանագրերի նկատմամբ, որոնք նախկինում չեն նույնացվել որպես ՀՀՄՍ 17-ի եւ ՖՀՄՍ 4-ի կիրառմամբ որպես վարձակալության:

Ընկերությունը կօգտագործի ստանդարտով առաջարկվող բացառությունները վարձակալական պայմանագրերի գծով, որոնց համար վարձակալության ժամկետը վերջանում է սկզբնական կիրառման ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում, և վարձակալական պայմանագրերի գծով, որոնց հետ կապված ակտիվը ցածրարժեք է:

ՖՀՄՍ 16-ի կիրառման՝ նախնական գնահատված ազդեցությունը Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա հետևյալն է՝

	<u>1 հունվարի 2019թ.</u>
Ակտիվներ	
Հիմնական միջոցներ (օգտագործման իրավունքով ակտիվներ)	<u>149,258</u>
Ընդամենը ակտիվներ	<u>149,258</u>
Պարտավորություններ	
Վարձակալական պարտավորություն	<u>149,258</u>
Ընդամենը պարտավորություններ	<u>149,258</u>
2 ռուտ ազդեցությունը կապիտալի վրա	<u><u>—</u></u>

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր»

2017թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 17-ը՝ «Ապահովագրության պայմանագրեր» (ՖՀՄՍ 17), նոր համապարփակ հաշվապահական հաշվառման ստանդարտ, որը ընդգրկում է ապահովագրական պայմանագրերի ճանաչումը, չափումը, ներկայացումը և բացահայտումը: Ուժի մեջ մտնելուց հետո ՖՀՄՍ 17-ը կփոխարինի 2005թ.-ին թողարկված ՖՀՄՍ 4-ին՝ «Ապահովագրության պայմանագրեր» (ՖՀՄՍ 4): ՖՀՄՍ 17-ը կիրառելի է բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի համար (այսինքն՝ կյանքի, ոչ կյանքի, անմիջական ապահովագրության և վերաապահովագրության)՝ անկախ կազմակերպությունների տեսակներից, որոնք տրամադրում են ապահովագրությունը, ինչպես նաև որոշակի երաշխիքների և դիսկրեցիոն մասնակցության պայմաններով ֆինանսական գործիքների համար: Կիրառության շրջանակից կկատարվեն մի քանի բացառություններ: ՖՀՄՍ-ի 17-ի ընդհանուր նպատակն է՝ ապահովագրության պայմանագրերի համար տրամադրել հաշվառման մոդել, որն ավելի օգտակար և հետևողական է ապահովագրողների համար: Ի տարբերություն ՖՀՄՍ 4-ի պահանջների, որոնք հիմնականում հիմնված են նախորդ տեղական հաշվապահական հաշվառման քաղաքականությունների վրա, ՖՀՄՍ 17-ն ապահովում է ապահովագրության պայմանագրերի համապարփակ մոդել, որը ներառում է հաշվառման բոլոր ասպեկտները:

ՖՀՄՍ 17-ի հիմքը ընդհանուր մոդելն է, որը համալրված է՝

- ▶ Անմիջական մասնակցության հատկանիշներով պայմանագրերի հատուկ հարմարեցում (փոփոխական վճարի մոտեցում),
- ▶ Պարզեցված մոտեցում (հավելավճարի տեղաբաշխման մոտեցումը) հիմնականում կարճաժամկետ պայմանագրերի համար:

ՖՀՄՍ 17-ը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, ընդ որում պահանջվում է ներկայացնել համեմատական տեղեկատվություն: Վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է, եթե կազմակերպությունը կիրառում է ՖՀՄՍ 9-ը և ՖՀՄՍ 15-ը, ՖՀՄՍ 17-ը կիրառելու ամսաթվին կամ դրանից առաջ: Այս ստանդարտը կիրառելի չէ ԸՆկերության համար:

ՖՀՄՍ 4 մեկնաբանություն 23 «Անորոշություն շահութահարկի հաշվարկման կանոնների վերաբերյալ»

Մեկնաբանությունը վերաբերում է շահութահարկի հաշվառմանը, երբ հարկի հաշվարկը պարունակում է անորոշություն, որն ազդում է ՀՀՄՍ 12-ի կիրառման վրա: Մեկնաբանությունը չի կիրառվում ՀՀՄՍ 12-ի շրջանակից դուրս հարկերի կամ հավաքագրումների վրա, ինչպես նաև չի պարունակում կոնկրետ պահանջներ անորոշ հարկային մեկնաբանությունների հետ կապված տոկոսների և տույժերի վերաբերյալ: Մեկնաբանությունը, մասնավորապես, վերաբերում է հետևյալին՝

- ▶ արդյոք կազմակերպությունը առանձին է հաշվի առնում անորոշ հարկային մեկնաբանությունները,
- ▶ կազմակերպության ենթադրությունները՝ կապված հարկային մարմինների կողմից հարկման մոտեցումների մեկնաբանությունների ստուգման հետ,
- ▶ ինչպես է կազմակերպությունը սահմանում հարկվող շահույթը (հարկային վնասը), հարկման բազան, չօգտագործված հարկային վնասները, չօգտագործված հարկային գերավճարները և հարկային դրույքաչափերը,
- ▶ ինչպես է կազմակերպությունը հաշվի առնում փաստերի և հանգամանքների փոփոխությունները:

Կազմակերպությունը պետք է որոշի, թե արդյոք յուրաքանչյուր անորոշ հարկային մոտեցում պետք է դիտարկել առանձին, թե մեկ կամ մի քանի այլ անորոշ հարկային մոտեցումների հետ միասին: Պետք է կիրառել այն մոտեցումը, որն ավելի լավ է կանխատեսում անորոշության հստակեցման արդյունքը:

Մեկնաբանությունն ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն գոյություն ունեն որոշակի անցումային պարզեցումներ: Կազմակերպությունը կսկսի կիրառել մեկնաբանությունը գործողության մեջ մտնելու օրվանից: Այս փոփոխությունները չունեն ազդեցություն ԸՆկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների ամփոփ նկարագիր (շարունակություն)

Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

Փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում՝ Կանխավճարի հատկանիշներ բացասական փոխհատուցմամբ

ՖՀՄՍ 9-ի համաձայն, պարտքային գործիքը կարող է չափվել ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, պայմանով, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված գումարի վրա հաշվեգրված տոկոսագումարների վճարումներն են (SPPI չափանիշը), և գործիքը պահվում է տվյալ դասակարգման համար համապատասխան բիզնես մոդելի շրջանակներում: ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները հստակեցնում են, որ ֆինանսական ակտիվը անցնում է SPPI չափանիշով, անկախ իրադարձությունից կամ հանգամանքից, որը հանգեցնում է պայմանագրի վաղաժամկետ դադարեցման, և անկախ նրանից, թե որ կողմն է վճարում կամ ստանում ողջամիտ փոխհատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2019թ. հունվարի 1-ից և պետք է կիրառվեն հետընթաց մոտեցմամբ, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Փոփոխությունները ազդեցություն չունեն կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Տարեկան բարեփոխումներ 2015-2017 շրջան (թողարկված 2017 թվականի դեկտեմբերին)

Այս բարեփոխումները ներառում են՝

ՀՀՄՍ 12 «Շահութահարկ»

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ շահաբաժինների գծով շահութահարկի հետևանքները ուղղակիորեն կապված են բաշխման ենթակա շահույթ սկզբնավորող գործարքների կամ իրադարձությունների և բաշխումների հետ: Հետևաբար, կազմակերպությունը շահաբաժինների գծով շահութահարկի բոլոր հետևանքները ճանաչում է շահույթում կամ վնասում, այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ կապիտալում՝ կախված այն հանգամանքից, թե որտեղ են ի սկզբանե ճանաչվել տվյալ գործարքները կամ իրադարձությունները:

Կազմակերպությունը կիրառում է այս փոփոխությունները 2019թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Երբ Կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է այս փոփոխությունները, դրանք կիրառում է այն շահաբաժինների շահութահարկային հետևանքների նկատմամբ, որը ճանաչել է ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: Զանի որ Ընկերության ընթացիկ մոտեցումը համապատասխանում է փոփոխությանը, Ընկերությունը չի ակնկալում Եական ազդեցություն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 23 «Փոխառության ծախսումներ»

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ կազմակերպությունը ընդհանուր փոխառությունների մեջ է ներառում այն փոխառությունը, որն ի սկզբանե ձեռք է բերվել որակավորվող ակտիվը գարգացնելու նպատակով, երբ ակտիվը օգտագործման կամ վաճառքի համար պատրաստելու աշխատանքները մեծ մասամբ ավարտված են:

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ

ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են ունենում ներկայացված ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի, ինչպես նաև պայմանական պարտավորությունների բացահայտումների վրա: Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառվող գնահատման նշանակալի ոլորտները վերաբերում են մաշվածությանը և ամորտիզացիային, բռնագանձված գրավների իրական արժեքի չափմանը և արժեգրվման գնահատմանը: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարությունը կատարել է հետևյալ դատողությունները, որոնք ունեն ամենանշանակալի ազդեցությունը ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

(հազար ՀՀ դրամ)

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների արժեզրկում (Քաղաքականությունը կիրառելի է մինչև 2018 թ. հունվարի 1-ը)

Արժեզրկման գծով պահուստների խմբային կորուստի անհրաժեշտության գնահատման ժամանակ ընկերությունը դիտարկում է այնպիսի գործոններ, ինչպիսիք են դեֆոլտի հավանականությունը (PD) և դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD): Որպեսզի գնահատվի անհրաժեշտ արժեզրկման գծով պահուստը, ենթադրություններ են արվում սահմանելու համար բնորոշ կորուստների մոդելավորումը և որոշելու համար պատմական փորձի վրա հիմնված անհրաժեշտ մուտքի պարամետրերը: Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի պորտֆելի արժեզրկումից կորուստների որոշման մեջ օգտագործված նշանակալի ենթադրությունները ներառում են`

Դեֆոլտի հավանականությունը (PD)

- ▶ Ընկերությունը հաշվարկում է դեֆոլտի հավանականության գործակիցները` օգտագործելով պորտֆելի շարժման մատրիցաները վերջին 12 ամիսների համար: Վերջին 12 ամիսների ընթացքում պորտֆելի շարժման մատրիցաները համարվում են բավարար դեֆոլտի հավանականության հաշվարկի (PD) համար, քանի որ դրանք ներկայացնում են պորտֆելի ամենավերջին կազմը, որ ներկայացնում է վարկի թողարկման մոդելի հետևողականությունը:
- ▶ Պորտֆելի համար շարժման մատրիցան հաշվարկվում է ամեն ամիս, երբ ամիս առ ամիս ցուցադրվում է նախկինում նկարագրված պորտֆելային խմբերի միջև շարժը:
- ▶ 12 ամսվա պատմական շարժման տվյալներից հաշվարկվում է դեֆոլտի հավանականությունը հաջորդ 6 ամսվա համար շարժումը գնահատելու միջոցով: Արդյունքում դեֆոլտի հավանականության մակարդակը ստացվում է պորտֆելի խմբերից յուրաքանչյուրի համար: 6 ամսվա դեֆոլտի հավանականությունը դեֆոլտի ճանաչման ենթադրյալ միջին ժամանակահատվածն է` սկսման պահից մինչև վարկի դեֆոլտի պահը:

Դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD)

- ▶ Ընկերությունը ուշադիր հետևում է ժամկետանց վարկերից մուտքերին և վերանայում է LGD տոկոսադրույքները ամեն ամիս` ելնելով փաստացի ստացված հատուցումներից:
- ▶ LGD-ի հաշվարկի համար օգտագործված ընտրանքը բաղկացած է բոլոր այն վարկերից, որոնք ավարտվել են պատմականորեն, բացառությամբ դեբիտորական պարտքերի, որոնք վերականգնվել են դադարեցվելուց հետո: Եթե վարկը վերսկսվելուց հետո նորից դադարեցվի, այն վերադարձվում է ընտրանքի մեջ:
- ▶ Գնահատված LGD ցուցանիշը օգտագործվում է բոլոր պորտֆելների խմբերի համար, բացառությամբ չապահովված խմբի: Չապահովված խմբի համար օգտագործվում է անկախ երրորդ կողմի առաջարկված արժեքի գնահատումը:

2017թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր վարկային միջոցները թողարկված էին համեմատաբար վերջերս, և, հետևաբար, տվյալ վարկային պորտֆելների համար բավարար վիճակագրական տվյալներ գոյություն չունեին ԱՎԿ-ի հաշվարկի համար: Մինչև որ բավարար տվյալներ չհավաքագրվեցին, ընդհանուր առմամբ սկզբնական 9 ամիսների ընթացքում գործարքների արժեզրկման գծով կորուստները հաշվարկվեցին միևնույն երկրում վարկային գործիքի դեֆոլտի հավանականության դրույքաչափի կիրառմամբ և հանրությանը մատչելի վճարվող վարկերի դեֆոլտի դեպքում կորստի չափի (LGD) միջին մակարդակի կիրառմամբ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում (Քաղաքականությունը կիրառելի է սկսած 2018թ.-ի հունվարի 1-ից)

ՖՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական ակտիվների բոլոր դասերի գծով արժեզրկումից կորուստների գնահատումը պահանջում է դատողությունների կիրառում, մասնավորապես ապագա դրամական հոսքերի արժեքի և ժամկետայնության ու գրավի արժեքի գնահատումը` արժեզրկումից կորուստները և վարկային ռիսկի զգալի աճը որոշելիս: Այս գնահատումների հիմքում ընկած են մի շարք գործոններ, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Ընկերության ԱՎԿ-ի հաշվարկները բարդ մոդելների արդյունք են, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ` ելակետային փոփոխականների ընտրության և դրանց փոխկապակցվածության վերաբերյալ: ԱՎԿ-ի հաշվարկի տարրերից են դեֆոլտի հավանականությունը և դեֆոլտի դեպքում կորստի չափը, որոնք իրենց մեջ ներառում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, դատողությունները արվում են նաև վարկային ռիսկի զգալի աճի կանխատեսման դեպքում:

(հազար ՀՀ դրամ)

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների արժեզրկում (Քաղաքականությունը կիրառելի է սկսած 2018թ.-ի հունվարի 1-ից) (շարունակություն)

Դեֆոլտի հավանականություն (PD)

Դեֆոլտի հավանականությունը որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է:

PD-ն գնահատելու համար Ընկերությունը օգտագործում է շարժման դրույք (տոկոսադրույք, որով դեբիտորական պարտքը տեղափոխվում է այլ ժամկետանց զամբյուղ) մեթոդաբանություն և Մարկովի շղթան: Այս մեթոդաբանության մեջ օգտագործվում է պատմական տվյալների, արժեզրկման փորձի և դեֆոլտի վիճակագրական վերլուծությունը, որպեսզի գնահատվեն այն վարկերը, որոնք ի վերջո դուրս կգրվեն: Հաշվարկները կիրառվում են ծառայության մակարդակով (լիզինգ և վարկեր): Դեֆոլտի ժամանակ գործիքների արժեքները խմբավորվում են ըստ վարկի/լիզինգի ժամկետանց օրերի (DPD), և վիճակագրական վերլուծությունը օգտագործվում է յուրաքանչյուր խմբի վարկերի/լիզինգների, ի վերջո, դեֆոլտի կարգավիճակում հայտնվելու հավանականությունը:

Ակնկալվող տեղեկատվություն

2018թ.-ի հունվարի 1-ից 2018թ.-ի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար PD-ի որոշման մեջ կանխատեսվող տեղեկատվության ներառման ազդեցության մոդելավորման համար Ընկերությունը ուսումնասիրել է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակ՝ որպես տնտեսական գործոններ, ինչպիսիք են.

- ▶ ՀՆԱ-ի աճը,
- ▶ Գործազրկության մակարդակը,
- ▶ Սպառողական գների ինդեքսը,
- ▶ Բնակարանների գների ինդեքսը,
- ▶ Տնային տնտեսությունների պարտքի մեծությունը:

Դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD)

Ընկերությունը խիստ հետևում է արժեզրկված վարկերի վերականգնմանը և յուրաքանչյուր ամիս, հիմնվելով վերականգնվող վարկերի վրա, վերանայում է LGD ցուցանիշները:

- ▶ LGD-ի հաշվարկներում օգտագործված ընտրանքը բաղկացած է բոլոր այն վարկերից, որոնք պատմականորեն մարվել են, բացառությամբ այն վարկերի, որոնք վերակնքվել են մարվելուց հետո : Եթե վարկային պայմանագիրը լուծվել է վերականգնվելուց հետո, ապա այդ վարկը կազմում է օգտագործվող ընտրանքի մի մաս և չի համարվում վերականգնված: Սա ներկայացնում է ՀՀՄՍ 39-ից անցումը, որը արտացոլում է փաստերի համադրությունը, ըստ որոնց PD-ի ցուցանիշը կանխատեսելի է և Ընկերության մի շարք վարկեր վերականգնվում են դեֆոլտից:
- ▶ Վերակնքված վարկերը նույնպես ազդում են LGD-ի ցուցանիշի վրա՝ պայմանագրի վերակնքման արդյունքում վերականգնված դրամական հոսքերը ներառելու պատճառով և համեմատելով դեֆոլտի ենթարկման հետագա վերակնքված պայմանագիրը՝ կիրառելով վերականգնման գործակից:
- ▶ LGD-ի գնահատված ցուցանիշը օգտագործվում է ամբողջ խմբի համար, բացառությամբ դեֆոլտ պորտֆելի՝ գրավով չապահովված մասնաբաժնի:

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքի մոդելավորում (EAD)

Փուլ 1-ում կորուստների ռիսկը դեֆոլտի դեպքում մոդելավորվում է վարկի մնացորդը հաջորդող 12 ամիսների մարումների չափով կարգավորման միջոցով, իսկ փուլ 2-ի դեպքում հաշվի են առնվում նաև առաջին 12 ամիսները հաջորդող ամիսները: Այս գործընթացը կարգավորվում է պայմանագրով սահմանված մարման ժամանակացույցի համաձայն, որը ճշգրտվում է մարումների ժամանակային ցուցանիշով: Մարումների ժամանակային շարքերը համարվում են ապագայի մարումները գնահատելու հուսալի միջոց:

(հազար ՀՀ դրամ)

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ (շարունակություն)

Վաճառքի համար պահվող ակտիվների վաճառքի արժեքից գույտ իրական արժեքի որոշում (FVLCTS)

Օգտագործված մեքենաների FVLCTS-ը որոշվում է ընդհանրացված կերպով, ինչը պայմանավորված է վերավաճառքի ժամանակ տրանսպորտային միջոցների վիճակների տարբերությամբ, որը հաճախ դժվար է ճշգրիտ որոշել:

Ղեկավարության գնահատականը հիմնված է նախորդ ժամանակաշրջանում նմանատիպ ակտիվների վաճառքի վերաբերյալ առկա տվյալների վրա: Ընկերությունը հաշվի է առնում նաև նախորդ տարիների միջին պատմական կորուստներ (առկայության դեպքում): Ղեկավարությունը հաշվի է առնում նաև իրադարձություններ, որոնք կանխորոշում են այդ ակտիվի վաճառքի գնի անկում:

Ֆինանսական երաշխիքներ

